ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովի Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի 24.05.2019թ. նիստում «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի առնչությամբ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների կողմից ներկայացված առաջարկությունների վերաբերյալ

Հ/հ	Առաջարկության հեղինակը	Օրենքի նախագծի հոդվածը, մասը, կետը կամ ենթակետը	Առաջարկության բովանդակությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ ՀՀ կառավարության պաշտոնական ներկայացուցչի դիրքորոշումը
1.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Սասուն Միքայելյան	5-րդ հոդված	Սահմանամերձ համայնք-ներում մարտական խնդիրներ իրականացնող զորամասերի համալրման գործընթացն ապահովելու, ինչպես նաև զբաղվածության հետ կապված խնդիրները լուծելու նպատակով առաջարկում եմ նախագծի 5-րդ հոդվածում կատարել լրացում և գործող օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «հանգամանքից» բառից հետո լրացնել «, ինչպես նաև պահեստազորի շարքային կամ կրտսեր ենթասպայական կազմերում հաշվառված մինչև 45 տարեկան քաղաքացիները՝ զորամասային օղակում ծառայության նշանակվելու դեպքում» բառերը:	Առաջարկությունն ընդունվել է:	Ընդունվել է, նախագծի 5-րդ հոդվածը խմբագրվել է՝ «**ՀՈԴՎԱԾ 5**. Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «36 տարեկան» բառերը փոխարինել «40 տարեկան» բառերով, ***իսկ «հանգամանքից» բառից հետո լրացնել «, ինչպես նաև պահեստազորի շարքային կամ կրտսեր ենթասպայական կազմերում հաշվառված մինչև 45 տարեկան քաղաքացիները՝ զորամասային օղակում ծառայության նշանակվելու դեպքում» բառերը:***»:

2.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Սասուն Միքայելյան	8-րդ հոդված	Օրենքի 41-րդ հոդվածում սահմանված չէ նույն օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն պաշտոնից ազատված բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոն զբաղեցնող զինծառայողին կադրերի տրամադրության տակ թողնելու ժամկետը, որի կապակցությամբ առաջարկում եմ նախագծի 8-րդ հոդվածում կատարել լրացում և գործող օրենքի 41-րդ հոդվածը լրացնել 1.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «1.1. Սույն օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքում պայմանագրային զինծառայողը պետական լիազոր մարմնի կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ թողնվում է երկու ամսից ոչ ավելի ժամկետով:»:	Առաջարկությունն ընդունվել է:	Ընդունվել է, նախագծի 8-րդ հոդվածը խմբագրվել է՝ «**ՀՈԴՎԱԾ 8**. Օրենքի 41-րդ հոդվածում. 1) 1-ին մասի՝ ա. 1-ին կետում «մեկ» բառը փոխարինել «երկու» բառով. բ. 2-րդ կետում «մինչև տվյալ գործով վերջնական որոշման կայացվելը» բառերը փոխարինել «մինչև ընտրված խափանման միջոցը փոխելու կամ պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման որոշումը վերացնելու օրվան հաջորդող 30-րդ օրը» բառերով. ***2) լրացնել 1.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ.*** ***«1.1. Սույն օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքում պայմանագրային զինծառայողը պետական լիազոր մարմնի կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ թողնվում է երկու ամսից ոչ ավելի ժամկետով:»:***
3.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Սասուն Միքայելյան	13-րդ հոդված	Օրենքի 72-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում, ի տարբերություն զինծառայողների և քաղաքացիական ծառայողների, պաշտպանության նախարարության համակարգում հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց համար սահմանված չէ բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցում	Առաջարկությունն ընդունվել է:	Ընդունվել է, նախագծի 13-րդ հոդվածը խմբագրվել է՝ «**ՀՈԴՎԱԾ 13**. Օրենքի 72-րդ հոդվածի. ***1) 2-րդ մասի 4-րդ կետում «64-րդ,» բառից հետո լրացնել «65-րդ հոդվածի 1-ին մասի,» բառերը.*** 2) 3-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հայաստանի Հանրապետության պաշտպանության մասնակցած անձանց մարտական գործողությունների

			վճարելու իրավունքը, որի կապակցությամբ առաջարկում եմ նախագծի 13-րդ հոդվածում կատարել լրացում և գործող օրենքի 72-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում «64-րդ,» բառից հետո լրացնել «65-րդ հոդվածի 1-ին մասի,» բառերը:		մասնակցի կարգավիճակ տրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով՝ հաշվի առնելով միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունը:»: